*ԾՐԱԳԻՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՒՄ Է ՄԱԿ-Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ*

*Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Միգրացիայի միջազգային կազմակերպության, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և Պարենի համաշխարհային ծրագրի կողմից:*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մարդկային անվտանգության բարելավումը Հայաստանի համայնքներում» ծրագրի «Աջակցություն թիրախային համայնքներում տնտեսության և սննդի անվտանգության բարելավմանը՝ կայուն տնտեսական հնարավորությունների ստեղծման և կարողությունների զարգացման միջոցով» բաղադրիչի շրջանակներում ընդգրկվելու համար

## Ծրագրի մասին

Ծրագրի նպատակն է աջակցել թիրախային Ալավերդի, Ամասիա, Բերդ և Թումանյան խոշորացված համայքներում Կայուն զարգացման նպատակների իրականացմանը՝ համայնքային դիմակայունության, սոցիալական պաշտպանության և ներառականության, տնտեսական և պարենային անվտանգությունը ուժեղացման, ապրուստի և կայուն աշխատանքային հնարավորությունների և կարողությունների զարգացման ու աջակցության միջոցով՝ ուղղված մարդկային անվտանգության մակարդակի բարելավմանը: Եռամյա այս ծրագիրը մեկնարկել է 2018թ. հոկտեմբերին:

## Ի՞նչ աջակցություն է տրամադրում ծրագիրը

Ծրագիրը կաջակցի՝ գյուղական բնակավայրերում նոր բիզնեսների ստեղծմանը, բիզնես կարողությունների զարգացմանը, արտադրության ծավալների ավելացմանը, արտադրանքի տեսականու ընդլայնմանը, տեխնոլոգիաների արդիականացմանը, շուկայավարման հմտությունների կատարելագործմանը, ինչպես նաև ագրոարդյունաբերության ոլորտում, նորարարական և վերականգնվող էներգիայի կիրառման խթանմանը, թափոնների կայուն կառավարման և վերաշակման համակարգերի ներդրմանը:

## Ինչպիսի՞ շահառուներ է փնտրում ծրագիրը

Ծրագիրը կաջակցի գյուղմթերքի արտադրության և վերամշակման, կենցաղային սպասարկման և ծառայությունների մատուցման ոլորտներում գործունեություն ծավալող ձեռներեցներին: Նախապատվություն կտրվի նորարական գաղափարներ (նոր տեխնոլոգիա, նոր կամ բարձրամեք արտադրանք, վերականգվող էներգիայի կիրառում) առաջարկող խմբերին, ինչպես նաև խոցելի խմբերին, հաշմանդամություն ունեցող անձանց, վերադարձող միգրանտներին, կանանց և երիտասարդներին:

## Դիմորդներին ներկայացվող պահանջները

- Գրանցված լինել և գործունեություն ծավալել Շիրակի (Ամասիա համայնք), Լոռու (Թումանյան, Ալավերդի համայնք) և Տավուշի (Բերդ համայնք) մարզերում.
- Հանդես գալ որպես գրանցված իրավաբանական անձ կամ չգրանցված՝ ոչ ֆորմալ խումբ կամ անհատ/-ներ.
- Ունենալ բիզնես ուղղվածություն.

- Հումքի և որոշակի ֆինանսական միջոցների աղբյուրներ.
- Համապատասխան տեխնոլոգիական հմտություններ ունեցող մասնագետներ
- Շուկայավարման ծրագիր և իրացման շուկա:

## Ինչպե՞ս դիմել

Հայտադիմումը կարող եք ձեռք բերել մարզպետարանից, համայնքապետարանից կամ ներբեռնել այստեղ՝ http://bit.ly/2GluFmr : Հայտադիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 30 ապրիլ 2019թ.: Հայտատուների ընտրությունը կկատարվի սահմանված չափորոշիչների համաձայն: Ծրագիրը կապ կհաստատի միայն ընտրված խմբերի հետ: Խնդրում ենք ուղարկել լրացված հայտադիմումը հետևյալ էլ. հասցեին՝ s.matevosyan@unido.org և apoghosyan@iom.int, կամ փոխանցել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, հասցեն՝ ք. Երևան, Պետրոս Ադամյան փ. 14: Հարցերի դեպքում, խնդրում ենք զանգահարել 043 507007 կամ 043 552232 հեռախոսահամարներով: